

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ա. Մ. Նազիբյան

ԵՐԼԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԸ ԲԱՆԱՀԱՎԱՔ-ԲԱՆԱԳԵՏ

Օրվանդ Լալայանը մեկն էր հայագիտության խոշոր դեմքերից, որը հրապարակ իշավ այն ծանր ժամանակաշրջանում, երբ սուլթանական Թուրքիայի կազմակերպած ջարդերի ու ավերածությունների հետևանքով վտանգի էր ենթարկվում հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն անգամ: Շուրջ կեսդարյա իր անխոնջ գործունեության ընթացքում Օրվանդ Լալայանը հրատարակեց վաթսուհին ավելի մեծ ու փոքր ազգագրական, բանահյուսական, հնագիտական, մանկավարժական, զեղարվեստական-թարգմանական աշխատություններ, ժողովածուներ, հոդվածներ, վավերագրեր և այլ նյութեր: Լալայանի գիտական այդ մեծարժեք ժառանգությունը մտել է հայագիտության ոսկե ֆոնդը:

Նր. Լալայանը ծնվել է 1864 թ. Ալեքսանդրապոլում (այժմյան Լենինական): Սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտելուց հետո հինգ տարի (1885—1890 թթ.) մանկավարժական աշխատանք է կատարել Ախալցխայի, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի թեմական դպրոցներում: 1890 թ. Նր. Լալայանը կնոջ՝ Հայկանուշ Հարությունյան-Լալայանի հետ մեկնում է արտասահման և մասնագիտական բարձրագույն կրթություն ստանում Ժնևի և Լոզանի համալսարաններում: Վերադառնալով Անդրկովկաս, Ն. Լալայանը նվիրվում է մանկավարժական ու գիտական գործունեության:

1896 թ. Շուշիում, Լալայանը իրականացնում է վաղուց ի վեր փայփայած իր ցանկությունը՝ լույս ընծայելով հայ ազգագրական առաջին գիտական պարբերականի՝ «Ազգագրական հանդեսի» առաջին դիրքը, որը բարձր գնահատության է արժանանում հայ մտավորականության ու մամուլի կողմից: Քսան տարվա ընթացքում համախմբելով ժամանակի առաջավոր մտավորականության ուժերը, Լալայանը հրատարակում է «Ազգագրական հանդեսի» 26 գիրք մեծ դեր խաղացին հայագիտության զարգացման ասպարեզում:

և Հայոց ազգագրական ընկերության միջոցով կազմակերպում բազմաթիվ միջոցառումներ, որոնք «Ազգագրական հանդեսը» իր ժամանակի ճանաչված հայագիտական պարբերականներից մեկն էր, որը նպատակ էր դրել «հավաքել հայ ազգագրության վերաբերյալ նյութեր և դրանց ուսումնասիրությամբ գծել հայ ազգի հոգեկան, մտավոր և հասարակական կյանքի զարգացումը: Ազգագրական հանդեսի ցանկությունն է՝ նպաստել ամեն մի հայի ճանաչելու իր ազգի անցյալը, յուր երկիրը, իրեն շրջապատող ազգերը»:

Բուն ազգագրության ու բանահյուսության նյութերին զուգահեռ, «Հանդեսը» մեծ տեղ էր տալիս հարակից բոլոր գիտություններին՝ պատմությանը, հնագիտությանը, աշխարհագրությանը, սոցիոլոգիային, լեզվաբանությանը, արվեստին, մարդաբանությանը և այլն: «Ազգագրական հանդեսի» էջերում հանդես են եկել ժամանակի հայ նշանավոր շատ գիտնականներ ու գործիչներ:

Սակայն «Ազգագրական հանդեսի» ամբողջ շունչն ու ոգին նրվանդ Լալայանն էր: Բացի անհատական շրջագայություններից և հրատարակած կոնկրետ աշխատանքներից, Լալայանը ազգագրության տարբեր բնագավառներին վերաբերող ծրագրեր էր կազմում, ուղարկում ուսուցիչներին ու հասարակական գործիչներին՝ տեղերում նյութեր հավաքելու համար: Նա միաժամանակ ստացված նյութերը վերադասակարգում, խմբագրում, ճարտարապետական հուշարձանները լուսանկարում, աշխարհագրական ու տեղագրական քարտեզներ էր կազմում, թարգմանություններ կատարում, «Հանդեսի» յուրաքանչյուր գիրքը ներկայացնելով բազմակողմանի ու հա-

1 Համառոտ տեղություն հայոց ազգագրական ընկերության նպատակների և ամբողջ գործունեության, Թիֆլիս, 1914, էջ 3:

ուստ րոմանդակությամբ, Իրավացի էր նրա կենսագիրներից մեկը, երբ գրում էր. «Հիրավի, Երվանդ Հալայանը ծավալել է մի այնպիսի էքսպանսիվ աշխատանք, զիտիս է ընկել այնպիսի հսկա գործ, որի նմանը թե՛ արտասահմանի, և թե՛ Ռուսաստանի գիտական-հետախուզական ասպարեզներում կատարել են հատուկ ընկերությունները, ինստիտուտներ՝ կազմակերպված հավաքական ուժերով, կոլեկտիվ ջանքերով, խմբական լքսպեդիցիաներով»²:

Հալայանը գիտական բեղմնավոր գործունեություն է ծավալել ազգագրության բնագավառում: Նախապես պատրաստված գիտական ծրագրով, Հալայանը անձամբ և իր գործակիցների միջոցով շրջագայելով Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակավայրերը, մանրամասն տեղեկություններ էր գրանցում տվյալ շրջանի պատմա-աշխարհագրական միջավայրի, տնտեսական կյանքի, ամուսնական ու հարսանյաց, ծննդյան, թաղման և այլ սովորույթների, ծեսերի, ինչպես նաև հավատալիքների ու սևոտիսպաշտությունների, ժողովրդական բժշկության և այլնի մասին: Ազգագրական այդ հետազոտությունը լրացվում էր ժողովրդական անգիր գրականության նմուշներով, նշանավոր վանքերի, պատմական հուշարձանների, միջնադարյան ձեռագիր մատյանների և այլ նյութիկների նկարագրություններով: Այդ ճանապարհով Հալայանը հրապարակ է հանել պատմական Հայաստանի մի շարք ազգագրական շրջանների մասին մեծածառն աշխատություններ, ինչպիսիք են՝ «Ջավախք», «Վարանդա», «Ջանգեզուր», «Նոր-Բայազետի գավառ կամ Գեղարքունիք», «Նախիջևանի գավառ կամ Գողթն», «Բորչալուի գավառ», «Շարուր-Դարալագյազի գավառ կամ Վայոց ձոր», «Գանձակի գավառ», «Վասպուրական», «Մուշ-Տարոն» և այլն, որոնք հատվածաբար տպագրվել են «Ազգագրական հանդեսում»: Հալայանը համեստորեն այդ աշխատությունները կոչել է՝ նյութեր ապագա ուսումնասիրության համար, բայց ծանոթանալով դրանց, դժվար չէ նկատել, թե ինչպիսի տքնաշան հետազոտական աշխատանք է կատարել հեղինակը՝ հավաքած տեղեկությունները ընդհանուր համակարգի բերելու համար: Ազգագրական նյութերի հավաքման ու հրատարակման հետ միասին, Հալայանը կատարել է մի քանի հետազոտություններ, որոնցից պետք է հիշատակել «Ծիսական կարգերը հայոց մեջ»³, «Նիժի և Վարդաշենի ուտիները ազգագրական տեսակետից»⁴, «Տղարների սովորությունների զարգացումը հայոց մեջ»⁵ և այլն:

Եր. Հալայանը վախճանվեց 1931 թ. փետրվարի 24-ին: Մինչև իր կյանքի վերջին րոպեները նա զբաղված էր իր սիրած գործով, խմբագրում ու տպագրության էր պատրաստում ազգագրության, բանահյուսության ու հնագիտության վերաբերյալ ուսումնասիրություններն ու նյութերը:

* * *

Երվանդ Հալայանի գիտական գործունեության հիմնական բնագավառներից մեկը եղել է ժողովրդական բանահյուսությունը: Մինչև Ե. Հալայանի ասպարեզ մտնելը հայ բանահյուսության առաջնեկ Գրեգորի Սրվանձտյանցի օրինակով նշանակալից աշխատանք էր կատարված բանահյուսական նյութերի հավաքման ու հրատարակման գծով: Բացի Սրվանձտյանցի հանրահայտ «Գրոց ու բրոց...», «Մանանա», «Համով-հոտով» ժողովածուներից, հրապարակի վրա կային Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների և ավանդությունների» գրքուկները, Գ. Շերենցի «Վանա սագ», Գ. Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը ժողովածուները և մի քանի այլ հավաքածուներ: Բանահյուսական նյութեր էին հրատարակում «Մեղու Հայաստանի» լրագիրը, «Փորձ» ամսագիրը և ուրիշ այլ պարբերականներ: Ժամանակի հասարակական ու գրական մտավորական գործիչների կողմից բանահյուսությունը ընկալվում էր որպես ազգային մշակույթի առաջադիմական ու կարևոր բնագավառներից մեկը: Այսուամենայնիվ, տվյալ շրջանում ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման ու, մասնավորապես, հրատարակության գործը դեռևս պայմանավորված էր առանձին անհատ գործիչների նախաձեռնությամբ ու կախված էր նրանց հնարավորություններից: Նեղ էր ու սահմանափակ բանահյուսական նյութերի հավաքման շրջանակները:

1887 թ. Գր. Խալաթյանի Հայ ազգագրության ծրագրի հրատարակմամբ և հատկապես 1896 թ. Երվանդ Հալայանի «Ազգագրական հանդեսի» հիմնադրմամբ խոշոր բեկումն է կատարվում հայ մշակույթի երկու կարևորագույն բնագավառներում՝ ազգագրությունն ու բանահյուսությունը:

² «Խորհրդային Հայաստան» օրաթիվ, 1931, փետրվարի 28:

³ «Ազգագրական հանդես», XXI, XXII, XXV և XXVI գրքեր, Թիֆլիս, 1912—1917:

⁴ «Տեղեկագիր», ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի, Երևան, 1926. № 1:

⁵ Նույն տեղում, 1931, № 5:

սովորներ տարերային գործունեության վիճակից բարձրանում և դառնում են զիտականորեն կազմակերպված հոստարակական լայն հոսնալում գտած մասնաճյուղեր: Առաջնորդվելով եվրոպական և ուսումնական առաջավոր գիտական մտքի նվաճումներով, Հայալաներ բացի զեղարվեստական-ճանաչողական արժեքից բանահյուսության մեջ դառնում էր նաև պատմա-ազգագրական կարևորագույն տեղեկություններ: Եր. Հայալաներ ժողովրդական բանահյուսությունը գիտում էր որպես ազգագրություն մի անբաժանելի օղակը և իր աշխատությունների մեջ մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին, որոնք ոչ միայն լրացնում ու լուստարանում են քննարկվող պատմա-ազգագրական շրջանի բնականական բարբերն ու հավատալիքները, այլև հենց իրենք բանահյուսական սյու ստեղծագործություններն էլ հասկանալի են դառնում ու պատճառաբանվում տվյալ կոմպլեքսի մեջ: Այդպիսիք են ամուսնության, հարսանիքի, մահվան, թաղման, ծննդյան, ավանդական տոնակատարությունների հետ կապված ծիսական երգերը, պատմական տեղանունների, իրադարձությունների, զեմքերի, ինչպես նաև ջրի, կրակի, բնության տարերային երևույթների, հովատալիքների ու նախապաշարմունքների հետ կապված ավանդություններն ու առասպելական դրույթները: Պատմական այդպիսի ավանդություններից են Դավիթ Անհողթի, Օհան Օձնեցու, Գրիգոր Տաթևացու մասին եղած և ուրիշ այլ ավանդությունները, որոնք տպագրված են «Ազգագրական հանդեսի» էջերում: Տարբեր աղբյուրով ազգագրական աշխատանքներում օգտագործվում են նաև փոքր ժանրերի նմուշներ՝ առածներ, անեծքներ, որհանքներ և այլն, որոնք շնչած իրենց հարևանցի և անցեղիկ օգտագործման բնույթին, հետաքրքրական հարցեր են պարզում: Իհրենք մի օրինակ. Հայալաներ «Զուլախը» ազգագրական աշխատության մեջ հիշատակում է ժողովրդի մեջ գործածական «մաղղ կտրած» կամ «մաղղ մկրատ» նախատական անեծք-արտահայտությունը: Շատերի համար անհասկանալի է այդ արտահայտության նախատական իմաստը: Հայալաներ պարզել է, որ զա ծագում է ժողովրդական մի հին սովորույթից, համաձայն որի մեռած կնոջը թաղելիս՝ ծամերը կտրել են երախտիցը պատկանելու համար: Հայալանը որի է առել նույն հայերի մեջ գտնվող մի շարք ավանդություններ Ալեքսանդր Մակեդոնացու մասին, որոնք տարբերակներ են համաշխարհային ֆուլկլորի շատ տարածված սյուժեներին: Այդպիսի առժանի է նաև նրա հայտնաբերած և տպագրած «Արա Դեղեցիկ» ավանդակիցը⁶, որը յուրահատուկ ձևով արձագանքում է Մովսես Խորենացու կողմից հերկայացված «Արա Դեղեցիկ և Շամիրում» առասպելական-փիպական դրույթին:

Ազգագրական նյութերին միաձուլված ու շաղկապված բանահյուսական նյութերից բացի, որպես ազգագրական տվյալ շրջանի հոգևոր մշակույթի մի բնագավառ, «Ազգագրական հանդեսում» Հայալաներ տպագրել է առանձին ժանրերով կամ էլ բազմաժանր խառն նյութերի հավաքածուներ, ինչպես, օրինակ՝ Բորչալուի և Վասպուրականի բանահյուսության նմուշները:

Առանձին ժանրի նյութերից շատ տարածված են վիճակի կամ քանդությունների երգերը, որոնք սովորաբար կատարվում են համարձակ տոնակատարության և բնականապես ժողովրդական տարրերի տոների ժամանակ: Վիճակի երգերը անխառնաձայն հայելու նման ցույցանում են ժողովրդի առօրյան ու կենցաղը, թեև դրանց հիմնական թեման սերն է՝ կապված գեղջուկ աշխատավորի հոգսերի ու ապրումների հետ: Շատ բնորոշ է այդ տեսակետից շանգեղությունը գրված և տեղանուններով բաղկավորված:

Տուս կրկյամ Հաստին կալը,
Կրէրնա Բաթվա սարը,
Ջանրս քեզ մատաղ փաղեցին,
Ուղարկի իմ բալա յարբը:

Կարևոր արժեք են ներկայացնում հայ բանահյուսության համար նաև Եր. Հայալանի գրված և հրատարակած «Սասնա ծռեր» վեպի նոր Բայազետի, Վանի և Ալաշկերտի տարբերակները և իրանական «Ռոստամ-Զալ» վեպի հայկական տարբերակը:

Նրվանոց Հայալաներ իր ժողոված բանահյուսական նյութերը հրապարակ է հանել նաև առանձին գրքերով, ի մի հավաքելով տվյալ շրջանից գրված առնված բանավոր ստեղծագործություններ:

6 «Ազգագրական հանդես», X գիրք, Թիֆլիս, 1903, էջ 304—313:
7 Նույն տեղում, IX գիրք, Թիֆլիս, 1902, էջ 144—159:
8 Նույն տեղում, XI գիրք, Թիֆլիս, 1904, էջ 33—128 և XX—XXV գրքեր, Թիֆլիս, 1910—1914, էջ 61—101, 101—126, 117—197, 149—195, 117—180, 108—164:
9 Նույն տեղում, Գ գիրք, Թիֆլիս, 1898, էջ 114:

րոյոր տեսակները: Այդպիսի մի ժողովածու է նր. Հալայանի «Ջավախքի բուրմունքը»¹⁰, որը նյութերը նա հավաքել է անձամբ 1880-ական թվականներին. երբ սուսուցչություն էր անում Ախալքալաքում:

«Ջավախքի բուրմունքը» ժողովածուի կարևոր արժանիքներից մեկը նրա բազմաժանր բնույթն է. հատկապես այն, որ Հալայանը մեծ ուշադրություն է դարձրել բանահյուսության մանր-բանաձևային և վիպական ու քնարական մի շարք տեսակներին (աղոթքներ, ավանդություններ, երգեր և այլն), որոնք սերտորեն աղերսվում են ազգագրությանը: Հալայանը ֆալկլորագետի հմտությամբ նյութերի ոչ միայն ժանրային բաժանում է կատարել, այլև յուրաքանչյուր ժանրի տակ ենթատեսակներն է զանազանել: Ժողովածուի մեջ ներկայացնելով առանձին բաժիններով առողջության ու հիվանդության, առօրյա կյանքին վերաբերող աղոթքները, Հալայանը խորապես գիտակցել է դրանց դերը ժողովրդի մտածողության ու աշխարհըմբռնման պարզաբանման խնդրում, նկատի առնելով, որ ժողովրդական աղոթքները իրենց ծագմամբ հիթանոսական արմատներ ունեն և հաճախ հակադրվում են քրիստոնեական աշխարհայացողությանը:

Հարուստ ու բազմազան են ժողովածուում ներկայացված քնարական երգերը (սիրո, հարսանյաց, սգո, պանդխտության և այլն): Հալայանի գրի առած սիրո երգերը մեծ մասամբ գովերգեր են՝ յարի արտաքին ու ներքին բարեմասնությունների մասին, և իրենց կառուցվածքով, կրկներգերով ու բովանդակությամբ հիշեցնում են մեր ժողովրդական երգերի մյուս տարբերակները («Կայնե ֆիտան պոյիդ զուրպան...», «Քլեկ, քեկ պոյիդ մառաղ...», «Այս լոր իմ, լոր իմ...» և այլն): Սիրո երգերի մեջ ուշադրության արժանի է «նս վարեն կուգայի դուն դուռը բացիր» հայտնի երգի տարբերակը, որը հայտնի է «անտունի» անվամբ և մշակված է Կոմիտասի կողմից: Հարսանեկան երգերի մեջ ծիսական սովորությունների հետ, հատկապես հարսին վերաբերող երգերի մեջ («Աղջի հարսնավոր էկավ գեղի վերեն...», «Զեմ էրթա, մերի՛կ, չեմ էրթա...») որոշակի կերպով նկատվում են տխուր ու թախծոտ տրամադրություններ, որոնք անդրադարձնում են կնոջ իրավական վիճակը անցյալում: Ժողովածուում ներկայացված են նաև ընտանեկան-կենցաղային, պանդխտության, երկրագործի, սգո, երգիծական և ծիծաղալարժ երգերի նմուշները:

«Ջավախքի բուրմունք» ժողովածուի հիմնական բաժիններից մեկը ավանդություններն են, որոնք Հալայանը բաժանել է հետևյալ խմբերի՝ կրոնական, կերպարանափոխություն, պատմական, տեղագրական և կյանքի պատկերներ: Ավանդությունների մեջ պատմական արժեք են ներկայացնում Պապ թագավորի մասին եղած նյութերը, որոնք Հալայանը բաղդաօտում է Փավստոս Բուզանդի պատմության մեջ եղած վկայությունների հետ և հետաքրքրական նմանություններ գտնում: Կերպարանափոխություն բաժնում դրված ավանդություններից շատերը իրերի և կենդանիների շուրջը հյուսված լեգենդներ են («Փեթակ», «Մկներ ու կատու», «Լուս» և այլն): Հալայանի գրի առած «Թմկարերդի առումը» մի քանի տողից բաղկացած ավանդության հիման վրա մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը կերտել է իր նշանավոր նույնանուն պոեմը: Գեղագիտական ու բարոյախոսական ընդհանրացում պարունակող փոքր, բայց խորիմաստ ավանդության մի նմուշ է Հալայանի ժողովածուում դրված «Բինգյուլը». «Փաշին մեկը կերթա Բինգյուլ սարերը քեֆ էնելու: Նոքյարը դիմա՛ մորթն, տանի կը աղբուրը լվալու: Բիրտան դոխը սաղնա թոի կը, վրայն կաթկթած ջուրը մե-մե աղբուր դառնա, ակն բղխա կը, ատոր հմար ա Բինգյուլ կըսվի»¹¹: Հայտնի է, որ Բինգյուլի մասին շատ ավանդություններ են հյուսվել, որոնք մշակվել են մեր բանաստեղծների կողմից (Ավ. Իսահակյան և ուրիշներ):

Հայկական բանահյուսության մեծարժեք գործերից են նր. Հալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուի երեք հատորները¹², որոնք պարունակում են բացառապես հեթանոսական: Դա Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեթանոսների» 10 պրակներից հետո մեր հեթանոսագրության ամենածավալուն հավաքածուն է: Ժողովածուի առաջին երկու գրքերը պարունակում են բուն Արարատյան դաշտի հեթանոսները (Աշտարակ, Օշական, Փարպի, Վաղարշապատ): Իսկ երրորդ գրքում ընդգրկված է Ապարանում բնակություն հաստատած արևմտահայ մի շարք վերաբնակիչների հեթանոսները (մշեցիներ, վանեցիներ, ալաշկերտցիներ, մալազկերտցիներ և այլն): «Մարգարիտների» երեք գիրքը միասին պարունակում են 91 հեթանոս, որոնք 1912—1914 թթ. գրի է առել Ն. Հալայանը: «Մարգարիտներ» ժողովածուում գերակշռող տեղ են զբաղում հրաշապատում սյուժեները, ինչպես, օրինակ, Հազարան բլրույի,

10 Ն. Ն. Հալայան, Ջավախքի բուրմունք, Թիֆլիս, 1892:

11 Նույն տեղում, էջ 59:

12 Ն. Ն. Հալայան, Մարգարիտներ հայ բանահյուսության Ա—Բ գրքեր՝ էջմիածնի գավառ, Ապարան, Թիֆլիս — Վաղարշապատ, [1914—1915]:

բայց փրկվել է նրանց խմաստուն խոսքի ու գրույցը, արդարության, ազատության ու երջանկության մասին նրանց բանաստեղծական երազանքը: Գիտական այդ արշավախմբի աշխատանքի արդյունքը բեղմնավոր է եղել: Գրի են առնվել շուրջ 800 հեքիաթ, գրույց ու ավանդություն, բազմաթիվ երգեր և բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործություններ:

Անձամբ շրջագայելուց և նյութեր հավաքելուց բացի, Հալայանը մեծ ուշադրություն էր դարձնում այդ կարևոր գործին մտավորականության լայն խավերին մասնակից դարձնելու վրա: Նա մամուլի էջերում հրատարակած հայտարարություններով, ազգագրական ընկերության կազմակերպած զասախոսություններով և բազմաթիվ այլ միջոցներով հորդորում և խրախուսում էր հայ գրականության ու լուսավորության գործիչներին՝ նվիրվել ազգային մշակույթի պահպանման այդ մեծ գործին: Հալայանը գրում էր. «Նվ դեռ քանի քաղաքակրթության հուրը լափում է անցյալի բոլոր հիշատակները, մենք պետք է շտապենք հավաքելու, ինչ որ դեռ մնացել է...»¹⁶: Հալայանն իրավացիորեն գտնում էր, որ հայ ժողովրդի բանավոր գրականության գանձերի և հոգևոր մշակույթի այլևայլ նյութերի հայտնաբերումն ու հավաքումը անհատական գործ չէ, այլ պետք է դառնա համազգային, համաժողովրդական գործ՝ մտավորականության գիտակցված ու կազմակերպված, մշտական ու եռանդուն աշխատանքի ասույթով: Հալայանը բանահյուսությունն ու ազգագրությունը դիտում էր որպես «ժողովրդական կյանքի ճշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իր նյութը կվերցնե՝ ազգային վեպ ստեղծելու, լեզվաբան-բանասեր ու ոճեր կթաղե՝ ազգային լեզուն հարստացնելու և օտարանալուց ազատելու, հրապարակախոսն ու հոգևորականն ազգի վերքերը կնկատեն՝ նրանց դարձանումը քարոզելու, բժիշկը նրանց ցավերը կտեսնե՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան բնական կյանքը կբմբռնե՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը յուր նյութը կվերցնե՝ գծելու, էվոլյուցիոնի օրենքները»¹⁷:

Հալայանը տաղանդավոր կազմակերպչի իր արտակարգ ընդունակությամբ դեպի այդ կարևոր գործն է մղում տարբեր զավառների ու ավանների ուսուցիչներին, հայ գրողներին ու հասարակական գործիչներին և համապատասխան ցուցումներով, ծրագրերով օգնում նրանց հավաքչական աշխատանքին: Շնորհիվ Հալայանի այդ եռանդուն գործունեության «Ազգագրական հանդեսի» էջերում և այլուր հրապարակ են գալիս Հայաստանի պատմական տարբեր զավառների բանահյուսական արժեքավոր նյութեր: «Իրանցից հիշատակության արժանի են՝ Գր. ք. Նժդեհյանի՝ Ալաշկերտի բանավոր գրականության բազմաժանր հավաքածուն, Հրաչյա և Արմենուհի Աճառյանների Պոլսահայ ուսմական անգիր գրականության հավաքածուն, Բենեկի (Սահակ Մուխսիսյան) Հարթ զավառի (Բուլանրիս) բանահյուսության հետաքրքրական նմուշները, Ավ. Խսահակյանի «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», ինչպես նաև Քաջրիսունու (Արցախ, Շարուր-Կարալազյազ), Արամ շարրգի (Բասեն), Ա. Դադյանի (Վարանդա), Արթուրյիկի (Ղափան), Ա. Սոլաքյանի (Վան), Խ. Փորթեյանի (Նոր Նախիջևանի), Վրթ. Փափազյանի (Հայ բոշաներ) և ուրիշների հավաքած բանահյուսական այլ հավաքածուներ: Նրվանդ Հալայանի «Ազգագրական հանդեսում» տպագրվում են նաև «Մասնա ծուր» ու «Մուստամ-Ջալ» վեպերի մեջարթ պատումներ և Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական վեպը» նշանավոր ուսումնասիրությունը¹⁸:

Հավաքչական և հրատարակչական բոլոր գործունեության հետ մեկտեղ նր. Հալայանը զբաղվել է նաև հայ ժողովրդական բանահյուսության տեսության ու պատմության որոշ հարցերով: Բացի ազգագրական նյութերի մեջ հարևանցիորեն արված ակնարկներից ու դիտողություններից՝ կապված ավանդությունների, աղբյուրների, առասպելական զրույցների հետ, Հալայանը «Ազգագրական հանդեսի» Ա դրբում տպագրել է մի ծավալուն աշխատանք՝ «Համառոտ տեսություն հայ ազգագրության», որը, ընթացքով վերնագրի ազդարարմանը, ամբողջովին նվիրված է հայոց հին բանահյուսության հարցերին: Հալայանն իրավացի էր՝ հին բանահյուսության պաշտոնիկները դիտելով միաժամանակ որպես սկզբնաղբյուրներ հայ նախնի ազգագրության համար: Արժարժեղով իրեն նախորդած հայ և օտարազգի բանասերների (Գաթրճյան, Էմին, Ալիշան, Պալասանյան, Զարպանալյան, Տաշյան, Դյուլորի, Ֆեթթեր և այլն) կարծիքներն ու մեկնաբանությունները հայոց հին բանահյուսության մասին, Հալայանը առաջ է բերում նաև իր դիտողությունները՝ երբեմն առարկելով, երբեմն լրացնելով ու ճշտելով այս կամ այն տեսակետը: Հայ բանահյուսության և ազգագրության նախնական շրջանի վերաբերյալ Հալա-

¹⁶ «Ազգագրական հանդես», Ա գիրք, Շուշի, 1896, էջ 6:

¹⁷ Նույն տեղում, էջ 5:

¹⁸ «Ազգագրական հանդես», XIII—XVIII գրքեր, Թիֆլիս, 1906—1908, էջ 5—36, 38—68, 5—52, 69—117, 5—36, 5—24:

յանն ուղարկված է միջնադարյան հեղինակների մոտ (Աղաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Նզնիկ Կողբացի, Գրիգոր Մագիստրոս և ուրիշներ) պահպանված հատուկ տեղեկությունները: Ինչպես նախորդ բանասերները, Հայաստանը ևս իր ուշադրությունը բնեղում է Մովսես Խորենացու ավանդած Գողթան երգերի ու գրույցների վրա, համարելով դրանք «հայոց հոգևոր ու մտավոր կյանքի փառավոր արշավանքի պայծառ հաղթանակ»: Հայաստանը մատնանշում է այդ տեղեկությունների ֆուկլորային բնույթը և առանձնահատկությունների մասին: «Գրեթե ամեն զավառ մասն ունի այդ ամբողջության մեջ,— գրում է Հայաստանը,— և նրա ստեղծողն ոչ թե մի բանի անհատ, այլ ամբողջ հայ ազգն է եղած»¹⁹: Ընդունելով հայ հին բանահյուսության հեթանոսական ծագումը, Հայաստանը հակամետ է վիպական այդ հատվածները որոշակի ժամանակի վերագրելուն, չնայած, որ պատմական հայտնի ղեկավարի ու ղեկավարի հետ են կապված: Հայաստանի կարծիքով՝ այդ ժողովուրդը միշտ էլ երգել է իր ղեկավարողներին, թեև շատ ղեկավարներ վրանք գրավոր հիշատակության չեն արժանացել ու պահպանվել:

Իրավացի է Հայաստանը, երբ գրում է, թե բացի Խորենացու վիպական հանրահայտ հատվածներից, բանահյուսության ազդեցությունն է երևում նաև այլ պատմական կերպարների ձևավորման վրա: Խոսելով վիպական այդ երգերի մասին, Հայաստանը հայտնում է, «Մակայն դրանք երկար ապրել են ժողովրդի բերանում և հասել մինչև Մագիստրոս (ԺԱ դար), որ գուցե երգի ղեկավարությունը հաղթած ավանդել է մեզ մի ղեկավարից յսած հետևյալ ղեկավարի հատվածը. «Ո՛ր տար ինձ զծովս ծխանի...»²⁰ և այլն: Հայաստանը համամիտ է նաև պրոֆ. Գր. Խալաթյանի այն կարծիքին, որ Մամբրատի, Գայլ Վահանի և ուրիշների ամբողջ պատմությունը ժողովրդական գրույցներից է հյուսված»²¹:

Անդադադանալով հայոց հին բանահյուսության բնույթին ու տեսակներին, Հայաստանը գրում է. «Ընդհանրապես մեզ հասած երգերը վիպական են, և ինչպես այդ հատուկությունները ցույց են տալիս, կարող էին կազմել մի ամբողջ ճանաչման, եթե Ֆիրդուսու պես մի հավաքող ու կազմող ունենային»²²: Նվազա՝ մտերմասն կանգ առնելով Խորենացու հաղորդած անվանումները ու հասկացությունները վրա (Երգը, Երգարանը, ցույցը, գրույցը, առասպելը, վեպը և այլն) Հայաստանը տարբեր բանասերների կարծիքները մեջ բերելով մեկնաբանություններ է տալիս հին բանահյուսության տեսակների, նրանց բանավոր տարածման, լեզվի ու տաղաչափության, հին դուստն-երգիչների, երաժշտական գործիքների, նախնի պարերի ու ժողովրդական ներկայացումների և ուրիշ այլ հարցերի վերաբերյալ: Բոլոր հարցերում չէ, որ կարելի է համաձայնել Հայաստանի հետ, երբեմն նա կրկնում է բանասիրության կողմից վիճարկված հնացած տեսակետներ: Նր. Հայաստանը հայոց հին պատմական երգերի, ավանդությունների ու անտիպապաշտությունների մասին ղեկում 1895 և 1896 թվականներին երկու ղեկուցում է կարդացել Փարիզի Մարդարանական և ժողովրդական ավանդությունների գիտական ընկերությունների նիստերում, որոնք և հրատարակվել են այդ ընկերությունների տպավոր օրգաններում:

Գիտական-մանկավարժական աշխատանքներին դուրսնալով Նր. Հայաստանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել դրական-հասարակական կյանքին: Նա բարեկամական-ընկերական կապեր էր պահպանում հայ գրողների հետ, որոնք բարձր էին գնահատում Հայաստանի գործունեությունը ժողովրդական բանավոր գրականության գանձերը կորստից փրկելու գործում: Բացի գրախոսություններից ու առանձին հոդվածներից, Հայաստանը գեղարվեստական գրականության ասպարեզում հայտնի է իր թարգմանություններով: Դրանցից ուշադրության արժանի են ժուրն Զանգի «Վարդագույն ամպը», Մոլիերի «Երեկոյանական հիվանդը», Ֆերդինանդ Շմիդտի «Նայ և Դամասկոսի», «Ահմեդի տպարակը» արևելյան գրույցը և այլն:

Նրվանդ Հայաստանը բանահյուսական հսկա ժողովրդական է թողել: Անձամբ է իր նախաձեռնությամբ կազմակերպած խմբաշավների ուժերով նա հավաքել է հայկական բանահյուսության գրեթե բոլոր ժանրի նյութերից՝ հայ և դրացի ազգերի ժողովրդական վեպի (էպոսի) պատմություններ, ավանդություններ և առասպելական գրույցներ, հերիաթներ, առակներ և կենդանական վեպիկներ, զվարճալի գրույցներ և անեկդոտներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, աղոթքներ, երգումներ, օրհնանքներ, անեծքներ, ժողովրդական վիպական և քնարական երգեր՝ իրենց բոլոր տարատեսակներով (աշխատանքային, բնության և սիրու, պանդխտության, սգու, օրորոցային, հարսանյաց, պարի, վիճակի և տոնական, կենցաղային, երգիծական), ինչ-

¹⁹ «Աղագրական հանդես», Ա գիրք, Շուշի, 1896, էջ 9:

²⁰ Նույն տեղում, էջ 10:

²¹ Նույն տեղում, էջ 10:

²² Նույն տեղում, էջ 12:

պես նաև աշուղական երգեր ու հորինվածքներ: Հայայանի բանահյուսական ժառանգությունը ներկայացնում է պատմական Հայաստանի ազգագրական գրեթե բոլոր շրջանների հոգևոր մշակույթի պատկերը: Իր ծավալով այն խիստ պատկառելի է: Բավական է նշել, որ Հայայանի բանահյուսական ժառանգության մեջ հաշվվում է շուրջ 1000 անուն հեքիաթ, որի միայն մի փոքր մասն է տպագրված: Այդ նյութերը հայկական ամբողջ հեքիաթային ժանրի առկա ժառանգության կեսից ավելին են կազմում:

Ծիշտ է, երբ Հայայանը ծավալուն հետազոտական աշխատություն չի թողել: Բայց միշտ չէ, որ գիտնականի մեծությունը չափվում է միայն նրա հեղինակած ուսումնասիրությամբ: Բանասիրության մեջ եղել են և լինում են հաստատվող ուսումնասիրություններ, որոնց գիտական հետաքրքրությունը սպառվում է հենց հրատարակության տարում: Պատահում են նաև գիտական խորաթափանց ընդհանրացմամբ աշխատություններ, որոնք դիմանում են ժամանակի քննությանը: Բոլոր դեպքերում էլ, սակայն, ուսումնասիրություններն ու հետազոտությունները կարող են հրանալ, վերանայվել ու խմբագրվել: Այդպիսին չեն սկզբնաղբյուրները, որոնք պահում են իրենց մնայուն արժեքը բոլոր սերունդների հետազոտողների համար: Հենց սկզբնաղբյուրների, և այն էլ բանավոր սկզբնաղբյուրների, հայտնագործմամբ ու հավաքմամբ է զուգընթացում Հայայանի նա իսկական գիտնականի խորաթափանցությամբ զգացել է ժողովրդի հոգեկան հարստությունը պարունակող գանձերի հավաքման անհետաձգելիությունը և իր ամբողջ կյանքը նվիրել է այդ մեծ գործին:

Այժմ հայ բանահյուսության ու ազգագրության ասպարեզում ձևոնարկվող ամեն մի աշխատանք չի կարող չառնչվել երբ Հայայանի գիտական ժառանգության հետ: Հայայանը երազում էր հրատարակված տեսնել իր բազում տարիների տքնաշան աշխատանքի արդյունքները: Բազմավաստակ բանահավաք-բանադեղի բաղձանքը իրականանում է. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսնող «Հայկական հեքիաթների» բազմահատորյակում ընդգրկված են երբ Հայայանի հավաքած նյութերը: Այդ և ուրիշ այլ հրատարակություններ հավերժացնում են երբ Հայայանի հիշատակը և խորհրդանշում հայկական մշակույթի ասպարեզում կատարած նրա մեծ ծառայությունը:

А. М. Назинян

ЕРВАНД ЛАЛАЯН — ФОЛЬКЛОРИСТ

Р е з ю м е

Е. Лалаян внес большой вклад в дело развития арменистики.

Проявив себя разносторонним ученым-этнографом, фольклористом, археологом, переводчиком, он развернул широкую научно-педагогическую деятельность.

Лалаян — основатель армянской научной этнографической периодики. На протяжении 20 лет (1896—1916) он издавал журнал «Азгагракан андес» («Этнографический журнал»).

Основной областью научно-исследовательской деятельности Лалаяна являлась фольклористика. Глубоко сознавая ценность и значимость фольклорных материалов для изучения духовной культуры народа, он большое внимание уделял их собиранию, вовлекая в это дело представителей интеллигенции и деятелей культуры.

В журнале «Азгагракан андес» и в отдельных печатных изданиях Лалаян отводил специальное место фольклорным материалам, как историко-этнографическим первоисточникам и образцам народного художественного творчества.

Большую ценность представляют сборники «Джавахки бурмунк» («Благоухание Джавахка», 1892 г.), «Народные басни» (1904—1905 гг.), «Паравашунч» (1911 г.), «Жемчужины армянского фольклора» (1914—1916 гг.) и другие, в которых охватываются почти все жанры народного поэтического творчества. По инициативе и под руководством Е. Лалаяна в 1915—1916 гг. была организована экспедиция в различные районы Закавказья, в результате которой были собраны и записаны ценные фольклорные материалы, полученные от армянских беженцев.

Лалаян занимался также вопросами теории и истории армянского фольклора («Краткий обзор армянской этнографии»).

Богатое наследие, оставленное Е. Лалаяном, изучается и издается советской армянской фольклористикой.